ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2018

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 6

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 Ե՞րբ են բաբելոնյան զորքերը գրավել Հուդայի թագավորության մայրաքաղաք Երուսաղեմը.

1) Ք.ա. 568 թ.
2) Ք.ա. 597 թ.
3) Ք.ա. 587 թ.
4) Ք.ա. 573 թ.

2 Ե՞րբ է Լյուդովիկոս Բարեպաշտը Արևմտահռոմեական կայսրությունը բաժանել իր որդիների միջև.

1) 843 թ.
2) 814 թ.
3) 817 թ.
4) 824 թ.

3 Ե՞րբ է հաստատվել «Իրավունքների օրենքը» Անգլիայում.

1) 1689 թ.
2) 1667 թ.
3) 1679 թ.
4) 1688 թ.

4 Ե՞րբ է հռչակվել Գերմանական կայսրությունը.

1) 1872 թ. սեպտեմբերին
2) 1870 թ. հոկտեմբերին
3) 1871 թ. հունվարին
4) 1872 թ. ապրիլին

5 Ե՞րբ է սկսվել Բալկանյան 2-րդ պատերազմը.

1) 1913 թ. ամռանը
2) 1911 թ. գարնանը
3) 1911 թ. աշնանը
4) 1912 թ. աշնանը

6 Ե՞րբ է ստեղծվել Տնտեսական փոխօգնության խորհուրդը.

1) 1956 թ.
2) 1948 թ.
3) 1949 թ.
4) 1953 թ.

7 Ե՞րբ է մի շարք երկրների կողմից ճանաչվել Կոսովոյի անկախությունը.

1) 2009 թ.
2) 2006 թ.
3) 2007 թ.
4) 2008 թ.

8 **Ո՞ր պետության գահակալ է եղել Թուկուլթի-Նինուրտա I-ը.**

1) Ասորեստանի
2) Խեթական պետության
3) Մարաստանի
4) Բաբելոնի

9 **Ո՞ր կայսեր օրոք Բյուզանդիոնը դարձավ Հռոմեական կայսրության մայրաքաղաք.**

1) Թեոդոսիոս
2) Տրայանոս
3) Դիոկղետիանոս
4) Կոստանդիանոս

10 **Շումերական ո՞ր քաղաքին է հաջողվել պարտության մատնել լագաշցիներին և կարճ ժամանակով իր իշխանության ներքո միավորել Շումերը.**

1) Ուրուկ
2) Ումմա
3) Լագաշ
4) Քիշ

11 **Ըստ ավանդության որ առաքյալի կողմից է հիմնադրվել Հռոմի թեմը.**

1) Պետրոս
2) Անդրեաս
3) Հովհաննես
4) Պողոս

12 **Ո՞ր ճակատամարտում տարած հաղթանակի համար ժամանակակիցները Կարլոս Մարտելին տվեցին մարտել (Մուրճ) անվանումը.**

1) Յարմուկ գետի
2) Պուատիեի
3) Սուասոնի
4) Կատալաունյան դաշտի

13 **Ո՞ւմ արշավախումբն է կատարել ծովային առաջին շուրջերկրյա նավարկությունը.**

1) Մագելանի
2) Քրիստափոր Կոլումբոսի
3) Վասկո դա Գամայի
4) Էնրիկե Ծովագնացի

14 **Ո՞ր լեզուն ՄԱԿ-ի պաշտոնական լեզուներից չէ.**

1) չինարեն
2) իսպաներեն
3) ֆրանսերեն
4) գերմաներեն

15 **Ի՞նչ է նշանակում փարավոն.**

1) «մեծ արքա»
2) «մեծ տիրակալ»
3) «մեծ տուն»
4) «մեծ բուրգ»

16 **Ի՞նչ տիտղոս էր կրում Գոթֆրիդ Բուլյոնցին.**

1) «Սուրբ հողերի պահապան»
2) «Արևելքի փրկիչ»
3) «Երուսաղեմի փրկիչ»
4) «Տիրոջ գերեզմանի պահապան»

17 **Խեթական պետության գահակալների անունները դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության.**

ա. Թուդխալիաս II
բ. Լաբարնա I
գ. Մուրսիլիս I
դ. Խաթթուսիլիս I

1) գ, դ, ա, բ
2) բ, դ, գ, ա
3) բ, գ, դ, ա
4) գ, բ, ա, դ

18 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Իկոնիայի սուլթանության հիմնադրումը
բ. Յարոսլավ Իմաստունի գահակալության ավարտը
գ. Մակեդոնական արքայատոհմի գահակալության շրջանի ավարտը
դ. Վորմսի համաձայագրի ստորագրումը
ե. Ռուսիայի մեծ մասի նվաճումը Բաթու խանի կողմից

1) բ, գ, դ, ե, ա
2) գ, բ, ա, ե, դ
3) գ, բ, ա, դ, ե
4) բ, գ, ա, դ, ե

19 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Նանտի էդիկտի հրատարակումը
բ. Ուտրեխտի միության կնքումը
գ. Սեֆյանների պետության հիմնադրումը
դ. Բարդուղիմեոսյան գիշերը, շուրջ 3000 հուգենոտների սպանությունը

1) դ, բ, ա, գ
2) գ, բ, դ, ա
3) գ, դ, բ, ա
4) դ, գ, ա, բ

20 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Շառլ Դը Գոլի հրաժարականը և նրա հեռանալը քաղաքական ասպարեզից
բ. Բեռլինի պատի կառուցումը
գ. Էլիզաբեթ թագուհու գահակալության սկիզբը
դ. Ալժիրի անկախության ճանաչումը Ֆրանսիայի կողմից

1) դ, բ, ա, գ
2) գ, ա, դ, բ
3) գ, բ, դ, ա
4) դ, գ, ա, բ

21 **Ե՞րբ է ձևավորվել Հռոմի պապի աշխարհիկ պետությունը Միջին Իտալիայում.**

1) 758 թ.
2) 751 թ.
3) 753 թ.
4) 756 թ.

22 **Ե՞րբ է ավարտվել խաչակրաց IV արշավանքը.**

1) 1204 թ.
2) 1192 թ.
3) 1198 թ.
4) 1202 թ.

23 **Ե՞րբ է Պետրոս Մեծն ընդունել կայսեր տիտղոսը.**

1) 1725 թ.
2) 1682 թ.
3) 1701 թ.
4) 1721 թ.

24 **Ե՞րբ է կնքվել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը.**

1) 1918 թ. նոյեմբերի 11-ին
2) 1918 թ. մարտի 3-ին
3) 1918 թ. հունիսի 4-ին
4) 1918 թ. հոկտեմբերի 30-ին

25 **Ե՞րբ է սկսվել առաջին հնգամյակը ԽՍՀՄ-ում.**

1) 1933 թ.
2) 1928 թ.
3) 1930 թ.
4) 1932 թ.

26 **Պարսից ո՞ր արքան է մատնվել անհաջողության սկյութների դեմ ձեռնարկած իր արշավանքում.**

1) Արտաքսերքսես III-ը
2) Քսերքսես I-ը
3) Դարեհ I-ը
4) Դարեհ III-ը

27 **Ո՞ր քաղաքը դարձավ հիքսոսների մայրաքաղաք.**

1) Ավարիսը
2) Մեմֆիսը
3) Հերակլեոպոլիսը
4) Թեբեն

28 **Ո՞վ է հանդես եկել «Առաջ Իտալիա» կոչով.**

1) Ա. Ֆորլանին
2) Ջ.Անդրեոտտին
3) Ջ.Գարիբալդին
4) Ս. Բերլուսկոնին

29 **Ո՞ւմ օրոք է վերացել ճորտությունը Ռուսաստանում.**

1) Ալեքսանդր II -ի
2) Եկատերինա II -ի
3) Ալեքսանդր I-ի
4) Նիկոլայ I-ի

30 **Ո՞րն է եղել Գերմանիայի Դաշնային Հանրապետության (ԳԴՀ) մայրաքաղաքը.**

1) Համբուրգը
2) Բոնը
3) Քյոլնը
4) Բեռլինը

31 **Ո՞րն էր 486 թ. Սուասոնի ճակատամարտի գլխավոր հետևանքը.**

1) Գալլա-հռոմեական բանակներին հաջողվեց Գալլիայից և Հյուսիսային Իտալիայից դուրս մղել ֆրանկներին:
2) Արևմտյան Հռոմեական կայսրությունը թուլացավ և դադարեց գոյություն ունենալուց:
3) Ֆրանկները պարտության մատնեցին գալլա-հռոմեացիներին և գրավեցին Հյուսիսարևելյան Գալլիան:
4) Լանգոբարդները պարտվեցին և ֆրանկները Հյուսիսային Իտալիան միացրեցին իրեց տերությանը:

32 **Ո՞րն էր Ռիչարդ I Առյուծասրտի և Սալահ ադ Դինի միջև կնքված հաշտության պայմանագրի հիմնական պատճառը.**

1) Անգլո-ֆրանսիական հարաբերությունների սրումը:
2) Երուսաղեմի թագավորության գրավումը Սալահ ադ Դինի բանակների կողմից:
3) Երուսաղեմի մոտ անգլո-ֆրանսիական բանակների ծանր պարտությունը:
4) Կիլիկիայի գետերից մեկում Ֆրիդրիխ II Օգստոս կայսրի խեղվելը:

33 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Մուհամմեդի և իր կողմնակիցների փախուստը Յաթրիբ
բ. Մուհամմեդի գլխավորությամբ Մեքքայի գրավումը
գ. Յարմուկ գետի ճակատամարտը
դ. Արաբական խալիֆայությունում Օմայան արքայատոհմի գահակալման սկիզբը

1) դ, գ, բ, ա
2) բ, ա, գ, դ
3) գ, դ, ա, բ
4) ա, բ, գ, դ

34 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Եգիպտոսի սահմանների ընդարձակումը Թութմոս III-ի օրոք
բ. Ավարիսի գրավումը Յահմոս I-ի կողմից
գ. Պայմանագրի կնքումը Ռամզես II-ի և Խաթուսիլիս III-ի միջև
դ. Ամենհոտեպ IV –ի կրոնական բարեփոխումները
ե. Թութմոս I-ի հաղթանակները Միտաննիի դեմ

1) բ, ե, ա, դ, գ
2) ե, բ, ա, գ, դ
3) ե, ա, դ, բ, գ
4) բ, ե, ա, գ, դ

35 **Ո՞ր երկրի առաջնորդն է հետևյալ խոսքերի հեղինակը.**

«Մենք հետ ենք մնացել առաջատար երկրներից 50 - 100 տարով: Մենք պետք է այդ հեռավորությունը վազելով անցնենք տասը տարում: Կա՛մ մենք կանենք դա, կա՛մ մեզ կճզմեն»:

1) ԽՍՀՄ-ի
2) Գերմանիայի
3) Իտալիայի
4) Ֆրանսիայի

36 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը.**

«Դուրս գալով անախորժություններով լի այս ժամանակներից՝ մեր 5-րդ նպատակը կլինի նոր աշխարհակարգը, որը կարող է ի հայտ գալ իբրև նոր դարաշրջան՝ ահաբեկչության սպառնալիքից ավելի ապահովագրված, ավելի հզոր՝ արդարության հետապնդման գործում և ավելի ապահով՝ խաղաղության որոնումներում»:

1) Բարակ Օբաման
2) Բորիս Ելցինը
3) Վլադիմիր Պուտինը
4) Ջորջ Բուշ Ավագը

37 **Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.**

1) Օտտոն I-ի գահակալության սկիզբը
2) Վերդենի դաշնագրի ստորագրումը
3) Հռոմի Ս. Պետրոսի տաճարում Կարլոս Մեծի թագարումը Հռոմի պապի կողմից
4) Գերմանական (Տևտոնական) թագավորության ստեղծումը

ա. 843 թ.
բ. 919 թ.
գ. 939 թ.
դ. 936 թ.
ե. 800 թ.

1) 1–դ, 2–ա, 3–ե, 4–բ
2) 1–դ, 2–ա, 3–գ, 4–բ
3) 1–դ, 2–բ, 3–գ, 4–ա
4) 1–ե, 2–բ, 3–գ, 4–ա

38 **Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.**

1) Հուգենոտյան պատերազմների ավարտը
2) Վեստֆալյան հաշտության պայմանագրի կնքումը
3) Նիդեռլանդների անկախության ճանաչումը Իսպանիայի կողմից
4) Երեսնամյա պատերազմի սկիզբը

ա. 1648 թ.
բ. 1594 թ.
գ. 1632 թ.
դ. 1618 թ.
ե. 1609 թ.

1) 1–գ, 2–ա, 3–բ, 4–դ
2) 1–բ, 2–ա, 3–ե, 4–դ
3) 1–դ, 2–գ, 3–ա, 4–բ
4) 1–բ, 2–գ, 3–ե, 4–ա

39 **Էգեյան ծովափի քաղաքները ո՞ր մայրաքաղաքին էր կապում «Արքայական ճանապարհը».**

1) Նինվե
2) Էքբատան
3) Շոշ
4) Բաբելոն

40 **Ո՞ւմ օրոք Ռուսիայում ուղղափառ քրիստոնեությունը հռչակվեց պետական պաշտոնական կրոն.**

1) Յարոսլավ Իմաստունի
2) իշխան Օլեգի
3) իշխան Վլադիմիրի
4) իշխան Դմիտրիի

41 **Ո՞րն է 1917 թ. Ռուսաստանում քաղաքական ճգնաժամի խորացման և հեղափոխությունների գլխավոր պատճառներից.**

1) Նիկոլայ II-ի և բանակի միջև հակասությունների սրումը:
2) Մոսկվայի, Եկատերինբուրգի, Իվանովոյի բանվորների գործադուլները:
3) Կովկասյան ճակատում ռուսական զորքերի անընդմեջ պարտությունները:
4) Հասարակության արդիականացման ցածր մակարդակը:

42 **Ո՞րն էր Թեոդոսիոս կայսեր կողմից Հռոմեական կայսրությունը երկու մասի բաժանելու պատճառը.**

1) Կայսրության նկատմամբ վերահսկողության պահպանելու անզորությունը:
2) Վանդալների ապստամբությունը:
3) Ֆրանկների և սաքսերի մշտական հարձակումները:
4) Արկադիոսի և Հոնորիոսի հակամարտությունները:

43 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Շեյխ Մոհամմադ Խիաբանու գլխավորությամբ զինված ապստամության իրականացումը Իրանում
բ. Ազգային բանկի կազմավորումը Իրանում
գ. Բուլղարիայի վերջնական անկախացումը օսմանյան տիրապետությունից
դ. Ֆոլկլենդյան պատերազմի սկիզբը
ե. Հանրապետության հռչակումը Թուրքիայում

1) գ, բ, ա, դ, ե
2) ա, դ, գ, ե, բ
3) գ, ա, ե, բ, դ
4) ա, գ, բ, ե, դ

44 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. «Մարտական խաչեր» ֆաշիստական ռազմականացված կազմակերպության ստեղծումը Ֆրանսիայում
բ. Ռուզվելտի «Նոր կուրսի» քաղաքականության սկիզբը
գ. «Բարգավաճման ժամանակաշրջան»-ի ավարտը և տնտեսական մեծ ճգնաժամի սկիզբը ԱՄՆ-ում
դ. «Ֆաշի դի կոմբատիմենտոյի» («Մարտական միություն») հիմնումը Մուսսոլինիի կողմից
ե. Վաշինգտոնի խորհրդաժողովի գումարումը

1) ե, դ, ա, գ, բ
2) դ, ե, ա, գ, բ
3) դ, ե, բ, ա, գ
4) ե, դ, գ, ա, բ

45 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Մարշալի պլանը
բ. Գերմանիայի Դաշնային Հանրապետության անդամակցելը ՆԱՏՕ-ին
գ. Շառլ Դը Գոլի նախագահ ընտրվելը
դ. Ատոմային էներգիայի եվրոպական համագործակցության՝ Եվրատոմի հիմնումը ԵՏՀ-ի մասնակիցների կողմից
ե. Ֆրանսիայի դուրս գալը ՆԱՏՕ-ի ռազմական կառույցից

1) ա, բ, գ, ե, դ
2) ա, բ, ե, դ, գ
3) գ, ա, բ, դ, ե
4) բ, ե, ա, դ, գ

46 **Տարեթվերը համապատասխանեցնել պատմական իևադարձություններին.**

1) Ք.ա. 331 թ.
2) Ք.ա. 334 թ.
3) Ք.ա. 332 թ.
4) Ք.ա. 329-327 թթ.

ա. Առանց դիմադրության Եգիպտոսի գրավումը Մակեդոնացու բանակների կողմից
բ. Գավգամելայի ճակատամարտը
գ. Քերոնիայի ճակատամարտը
դ. Գրանիկոս գետի ճակատամարտը
ե. Բակտրիայի և Սոգդիանայի գրավումը Մակեդոնացու բանակների կողմից

1) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ
2) 1-գ, 2-բ, 3-ե, 4-ա
3) 1-բ, 2-դ, 3-ա, 4-ե
4) 1-ա, 2-բ, 3-դ, 4-ե

47 **Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.**

1) Նիկեայի ժողովի գումարումը
2) Հռոմի գրավումը վեստգոթերի կողմից
3) Ադրիանապոլսի մոտ գոթերի հաղթանակը կայսերական զորքերի դեմ
4) Հռոմեական-գերմանական-գալլական բանակի հաղթանակը հոների դեմ Կատալաունյան դաշտում
5) Միլանի հրովարտակի հրատարակումը

ա. 325 թ.
բ. 381 թ.
գ. 313 թ.
դ. 378 թ.
ե. 451 թ.
զ. 410 թ.

1) 1-գ, 2-բ, 3-ա, 4-զ, 5-դ
2) 1-ա, 2-զ, 3-ե, 4-դ, 5-բ
3) 1-գ, 2-ա, 3-դ, 4-ե, 5-բ
4) 1-ա, 2-զ, 3-դ, 4-ե, 5-գ

48 **Գահակալների անունները համապատասխանեցնել իրենց հետ կապ ունեցող իրադարձություններին.**

1) Նաբոնիդ
2) Կուրիգալզու II
3) Համմուրապի
4) Նաբուգոդոնոսոր II
5) Սուպիլուլիումաս

ա. Նրա հրամանով հավաքվեցին Միջագետքում նախորդ դարաշրջաններում ստեղծված բոլոր օրենքների ժողովածուները և ամփոփվեցին մի օրենսգրքի մեջ:
բ. Նրա օրոք Բաբելոնը վերածվեց Առաջավոր Ասիայի խոշորագույն քաղաքի՝ շուրջ 200 հազար բնակչությամբ:
գ. Նա կարողացավ հաղթել Էլամին և գրավել Սուսանը (հետագայի Շոշը):
դ. Նրա օրոք բաբելոնյան զորքերը խորացան Արաբական թերակղզու անապատներում՝ հյուսիսային Հիջազի տարածքներում, իրենց վերահսկողության տակ առնելով առևտրական կարևոր մայրուղիները:
ե. Նա նվաճեց Յահմադի թագավորությունը, ջախջախեց Հյուսիսային Միջագետքի խուռիներին:
զ. Նա երկկողմ փոխօգնության պայմանագիր կնքեց Հայասայի արքա Խուկկանայի հետ

1) 1-բ, 2-ե, 3-ա, 4-գ, 5-զ
2) 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ, 5-ե
3) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ, 5-զ
4) 1-գ, 2-ե, 3-ա, 4-բ, 5-դ

49 **Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.**

1) Երկրորդ հանրապետության սահմանադրության հաստատումը սահմանադիր ժողովի կողմից Ֆրանսիայում
2) Ավստրո-Հունգարիա պետության ստեղծումը
3) Իտալիայի հռչակումը թագավորություն
4) ԱՄՆ-ի հռչակումը դաշնային հանրապետություն

ա, 1867 թ.
բ. 1787 թ.
գ. 1861 թ.
դ. 1798 թ.
ե. 1848 թ.

1) 1-ե, 2-ա, 3-գ, 4-բ
2) 1-բ, 2-ա, 3-ե, 4-դ
3) 1-ե, 2-բ, 3-գ, 4-դ
4) 1-գ, 2-ե, 3-դ, 4-բ

50 **Միջազգային կառույցների և կազմակերպությունների անվանումները համապատասխանեցնել դրանց ստեղծման տարեթվերին.**

1) Անկախ պետությունների համագործակցություն (ԱՊՀ)
2) Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)
3) Հյուսիսատլանտյան դաշինք (ՆԱՏՕ)
4) Եվրոպական տնտեսական համագործակցություն (ԵՏՀ)
5) Միավորված ազգերի կազմակերպություն (ՄԱԿ)

ա. 1959 թ.
բ. 1991 թ.
գ. 1992 թ.
դ. 1949 թ.
ե. 1945 թ.
զ. 1957 թ.

1) 1-զ, 2-ա, 3-դ, 4-զ, 5-ե
2) 1-բ, 2-զ, 3-դ, 4-զ, 5-ե
3) 1-ե, 2-ա, 3-զ, 4-դ, 5-բ
4) 1-բ, 2-զ, 3-դ, 4-ա, 5-ե

51 **Ք.ա. 197 թ. Հռոմի և Մակեդոնիայի միջև կնքված պայմանագրի վերաբերյալ նշված փաստարկներից ո՞րն է սխալ.**

1) Մակեդոնիան առանց Հռոմի համաձայնության չէր կարող պատերազմ սկսել որևէ պետության դեմ:
2) Մակեդոնիան պարտավորվում էր հրաժարվել իր բոլոր նվաճումներից և պետք է Հռոմին վճարեր 1000 տաղանդ ռազմատուգանք:
3) Մակեդոնիան Հռոմին պետք է հանձներ նավատորմը, իսկ մակեդոնական բանակը պետք է կրճատվեր մինչև 5000 զինվոր:
4) Հռոմը ճանաչում էր Մակեդոնիայի նվաճումները Եգիպտոսում և հունական քաղաքները ևս մնում էին Մակեդոնիայի տիրապետության տակ:

52 **Նշված պնդումներից ո՞րն է սխալ.**

1) Մեհմեդ II-ի օրոք ընդունվեց Օսմանյան պետության առաջին օրենսգիրքը՝ «Կանուն նամե»-ն:
2) 1839 թ. Օսմանյան կայսրությունում հայտարարվեց արևմտամետ բարենորոգումների նոր փուլի մասին, որն ստացել է թանզիմաթ անունը:
3) 1536 թ. ղզլբաշները Սեֆյանների առաջնորդ Իսմայիլի գլխավորությամբ գրավեցին Թավրիզը:
4) 1797 թ. իրանական բանակը ներխուժեց Ադրկովկաս և գրավեց Ղարաբաղը:

53 **Իրանում տարածված բաբիականության շարժման վերաբերյալ նշված պնդումներից ո՞րն է սխալ.**

1) Բաբիները բազմամուսնության կողմնակից էին, մերժում էին միամուսնությունը:
2) Ըստ Բաբի ուսմունքի Իրանում պետք է ստեղծվեր Բաբիների սրբազան թագավորություն, որտեղ կհաստատվեին սոցիալական արդարություն և հավասարություն:
3) Ըստ Բաբի ուսմունքի Ղուրանը հնացել էր և պետք է փոխարինվեր նոր գրքով՝«Բայանով» (Հայտնություն):
4) Բաբիները մերժում էին «ջիհադը»՝ «անհավատների» դեմ մուսուլմանների սրբազան պատերազմը:

54 **Ի՞նչ էին անվանում սուլթան Աբդուլ Համիդին.**

1) «թուլակամ»
2) «կարմիր»
3) «փրկիչ»
4) «կարմակոր»

55 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1) բուլե
2) հելոտ
3) ապելլա
4) էվպատրիդ
5) գերուսիա
6) մեծ պոնտիֆեքս

ա. գերագույն մագիստրատի տեղակալ Հին Հռոմում
բ. տոհմային ավագանու ներկայացուցիչ Հին Աթենքում
գ. ստրկացված բնակչության ներկայացուցիչ Հին Սպարտայում
դ. Ավագների խորհուրդը Հին Սպարտայում
ե. ժողովրդական ժողովի կողմից ընտրված 400-ի խորհուրդ Աթենքում
զ. հոգևոր առաջնորդ, քրմապետ Հին Հռոմում
է. գերագույն օրենսդիր մարմին՝ ժողովրդական ժողովը Սպարտայում

1) 1-զ, 2-գ, 3-է, 4 -ե, 5-դ, 6- բ
2) 1-զ, 2-ե, 3-դ, 4-գ, 5-ա, 6-բ
3) 1-ե, 2-ա, 3-է, 4-բ, 5-գ, 6-զ
4) 1-ե, 2-գ, 3-է, 4-բ, 5-դ, 6- զ

56 **Տվյալ հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1) ինդուստրացում
2) ապարտեիդ
3) դոկտրինա
4) ինկվիզիցիա
5) դեկրետ

ա. վարչակարգի անվանում, որին բնորոշ են ռասայական խտրականության ծայրահեղ դրսևորումները
բ. քաղաքական կամ տնտեսական ղեկավար սկզբունք, հայեցակարգ
գ. Խորհրդային Ռուսաստանի օրենսդիր և գործադիր իշխանության բարձրագույն մարմինների կողմից ընդունված օրենք
դ. հերետիկոսական գաղափարների հավատաքննության դատարան
ե. արդյունաբերության մեջ և տնտեսության մյուս ճյուղերում մեքենայական արտադրության ներդրման գործընթաց

1) 1-ե, 2-զ, 3-գ, 4-բ, 5-ա
2) 1-դ, 2-գ, 3-ա, 4-ե, 5-բ
3) 1-ե, 2-ա, 3-բ, 4-դ, 5-գ
4) 1-ա, 2-բ, 3-դ, 4-զ, 5-գ

57 **Նշված փաստարկներից ընտրել չորսը, որոնք հանդիսանում են Սոլոնի բարեփոխումների հետևանքներ.**

ա. Ատտիկայում մտցվեց գույքային ցենզ, որով բնակչությունը բաժանվեց 4 գույքային խմբերի:
բ. Աթենքը բաժանվեց երեք վարչական շրջանների, որոնցից յուրաքանչյուրը բաժանվեց 10 մասերի:
գ. Ստեղծվեց 10 ստրատեգոսների խորհուրդը:
դ. Աթենքում մշտապես բնակվող օտար պոլիսների ներկայացուցիչները քաղաքացիություն ստացան:
ե. Վերացվեց պարտային ստրկությունը:
զ. Ստեղծվեց ատենակալների դատարանը:
է. Ստեղծվեց Օստրակիզմի դատարանը:

1) բ, դ, ե, է
2) ա, բ, գ, դ
3) դ, ե, զ, է
4) ա, դ, ե, զ

58 **Նշված փաստարկներից ո՞ր չորսը Հռոմում հանրապետական կարգի ճգնաժամի հիմնական պատճառներից չեն.**

ա. Հռոմեական քաղաքացիներին հավասար իրավունքներ ստանալու համար բնակչության զգալի մաս կազմող իտալիկների պայքարը և ապստամբությունները:
բ. Երկրից հյուսիս արևելքից թափանցող էտրուսկների զանգվածային վերաբնակեցումը Հռոմեական հանրապետության տարածքում:
գ. Հռոմեա-մակեդոնական շարունակվող հակամարտությունները:
դ. Ժողովրդավարական ուժերի (պոպուլյարներ) և Ծերակույտի վերնախավի (օպտիմատներ) միջև պայքարի սրումը:
ե. Էգեյան և Սև ծովերի ավազանների երկրների մշտական ապստամբություններն ու միմյանց հետ ընդհարումները:
զ. Գայոս Մարիոսի կողմից Սուլլայի ձերբակալությունը:

1) ա, գ, դ, ե
2) ա, բ, գ, ե
3) բ, ե, գ, զ
4) բ, գ, ե, զ

59 **Նշված փաստարկներից ընտրել երեքը որոնք հանդիսանում են ԽՍՀՄ փլուզման հետևանքներ.**

ա. Ակտիվացավ քաղաքական իսլամը. որոշ իսլամական երկրներ կրկին ակտիվացրին կրոնական գաղափարախոսությունը՝ այն օգտագործելով քաղաքական նպատակներով:
բ. Ստեղծվեց ԱՊՀ-ն:
գ. Ընդունվեց ինքնավար մարզերի պետական սուվերենության միասնական հռչակագիրը:
դ. Ստեղծվեց Ինքնիշխան պետությունների Միությունը (ԻՊՄ):
ե. Դադարեց գոյություն ունենալուց Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ):
զ. Ռուսաստանի, Բելոռուսի և Ղազախստանի գլխավորությամբ ստեղծվեց Արտակարգ իրադրության պետական կոմիտեն (ԱԻՊԿ):
է. Հնարավոր դարձավ ավելի զորեղ ու հաստատուն Եվրամիության ստեղծումը:

1) բ, գ, է
2) ա, բ, է
3) բ, դ, զ
4) ա, ե, զ

60 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Պարսից արքայի և Աթենքի դեսպան Կալիասի միջև հաշտության պայմանագրի կնքումը Շոշում
բ. Մասագետների դեմ մղված ճակատամարտում պարսկական զորքերի ծանր պարտությունը, Կյուրոսի մահը
գ. Նիկիասի հաշտության կնքումը Սպարտայի և Աթենքի միջև
դ. Կյուրոսի գլխավորությամբ պարսկական բանակների ներխուժումը Բաբելոնիա
ե. Ստորին Եգիպտոսի նվաճումը Կյուրոս Մեծի որդի Կամբիզի կողմից
զ. Մակեդոնիայի, Էպիրոսի, Հոնիական կղզիների միավորումը և Մակեդոնիա պրովինցիայի ստեղծումը
է. Մարաթոնի ճակատամարտը
ը. Էքբատան մայրաքաղաքի գրավումը Կյուրոս II-ի կողմից
թ. Պիլոս քաղաքի գրավումը Դեմոսթենեսի կողմից
ժ. Սիրակուզա քաղաքի պաշարումը աթենական զորքերի կողմից

1) դ, ե, ը, բ, թ, գ, ա, զ, է, ժ
2) ը, դ, բ, ե, է, ա, թ, գ, ժ, զ
3) դ, ը, ե, զ, է, թ, ա, ժ, գ, բ
4) բ, է, թ, գ, դ, ե, ժ, ը, ա, զ

61 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Տարպիզոնի կայսրության գրավումը թուրքերի կողմից
բ. Կոսովոյի ճակատամարտը, սերբերի պարտությունը
գ. Անկարայի ճակատաարտը. Լենկ Թեմուրի՝ թուրքերի դեմ տարած հաղթանակը
դ. Պելոպոնեսի գրավումը թուրքերի կողմից
ե. Նիկեա քաղաքի գրավումը թուրքերի կողմից
զ. Թուրքերի հաստատումը Դարդանել նեղուցի եվրոպական ափին

1) բ, ե, գ, դ, ա, զ
2) զ, գ, բ, ե, դ, ա
3) բ, զ, ե, գ, ա, դ
4) ե, զ, բ, գ, դ, ա

62 **Երկրորդ աշխարհամարտի հետ կապ ունեցող իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. «ԽՍՀՄ-ի պատերազմը Ֆինլանդիայի դեմ, Կարելյան պարանոցն ու Լենինգրադից հյուսիս-արևմուտք ընկած տարածքների գրավումը
բ. «Հակակոմինտերնյան պակտի» ստորագրումը
գ. Պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը Ստալինի նախագահությամբ
դ. «Բարբարոսա պլան»-ի հաստատումը Հիտլերի կողմից
ե. Ճապոնական Հիրոսիմա քաղաքի ատոմային ռմբահարումը
զ. Ֆրանսիայի անձնատվության պայմանագրի ստորագրումը, նրա տարածքների 2/3-ի բռնազավթումը Գերմանիայի կողմից
է. Անգլո-ամերիկյան զորքերի մուտքը Իտալիա, Մուսսոլինիի վարչակազմի տապալումը
ը. Ճապոնական զորքերի հանկարծակի գրոհը Պիրլ Հարբոր խոշոր ռազմածովային հենակայանի վրա
թ. Հարավսլավիայի և Հունաստանի զավթումը Գերմանիայի և Իտալիայի կողմից
ժ. Միավորված ազգերի հռչակագրի ստորագրումը Վաշինգտոնում

1) բ, ա, զ, դ, թ, գ, ը, ժ, է, ե
2) ա, բ, զ, դ, թ, գ, ժ, ը, է, ե
3) բ, ա, դ, զ, գ, թ, է, ը, ե, ժ
4) զ, բ, ա, թ, դ, գ, ը, ժ, ե, է

63 **Քաղաքական ո՞ր գործչին է պատկանում հետևյալ արտահայտությունը.**

«Ավելի լավ է կերտել նորությունները, քան պատմել դրանց մասին»:

1) Ջ.Քենեդի
2) Ֆ. Ռուզվելտ
3) Ու. Չերչիլ
4) Հ. Թրուման

64 **Ո՞ր փաստաթղթից է վերցված հետևյալ արտահայտությունը.**

«Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք, և այդ իրավունքից ելնելով՝ նրանք ազատորեն հաստատում են իրենց քաղաքական կարգավիճակն ու իրագործում իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը»:

1) ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 15-րդ նստաշրջանում ընդունված 1514-րդ բանաձևից
2) Բեռլինի վեհաժողովում ընդունված բանաձևից
3) ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 7-րդ նստաշրջանում ընդունված 637-րդ բանաձևից
4) Հելսինկիի եզրափակիչ ակտի10 սկզբունքներից

65 **Պետական գործիչների անունները համապատասխանեցնել իրենց գաղափարներին.**

1) Ջոն Քենեդի
2) Մ. Թեթչեր
3) Ս.Բերլուսկոնի
4) Շառլ Դը Գոլ
5) Մ Խաթամի

ա. Հռչակեց «Առաջ Իտալիա» կարգախոսը:
բ. Ընդունեց «երկու երրորդի հասարակություն» կառուցելու գաղափարը:
գ. Հանդես եկավ «քաղաքակրթությունների երկխոսություն գաղափարով»:
դ. Առաջ քաշեց «Մեծ Բրիտանիայի, Իտալիայի, Ֆրանսիայի միավորման» գաղափարը):
ե. Առաջարկում էր «Կուսակցությունների վարչակարգի» փոխարեն վերստեղծել «իրական ժողովրդավարություն»:
զ. Առաջ քաշեց «նոր սահմանագծերի» կարգախոսը:

1) 1–զ, 2–բ, 3–դ, 4–ա, 5-գ
2) 1–գ, 2–դ, 3–ա, 4–ե, 5-բ
3) 1–դ, 2–ա, 3–զ, 4–ե, 5-բ
4) 1–զ, 2–բ, 3–ա, 4–ե, 5-գ

66 **Կատարել համապատասխանեցում.**

	Տարեթիվ		**Իրադարձություն**		**Պատերազմող կողմեր**
1	Ք.ա.197 թ.	**1**	Բեոտիայի Պլատեա քաղաքի ճակատամարտը	**1**	Հռոմեական կայսրություն և Սելևկյան տերություն
2	Ք.ա. 479 թ	**2**	Մարաթոնի ճակատամարտը	**2**	Աքեմենյան Պարսկաստան և Հունաստան
3	Ք.ա. 146 թ.	**3**	Կինոսկեֆալեի ճակատամարտը	**3**	Աքայան միություն և Սպարտա
4	Ք.ա. 190 թ.	**4**	Մագնեսիայի ճակատամարտը	**4**	Հռոմեական կայսրություն և Մակեդոնիա
5		**5**	Իսթմոսի ճակատամարտը	**5**	Մակեդոնիա և Աքեմենյան Պարսկաստան

1

1	2	4
2	4	2
3	1	5
4	3	1

2

1	3	2
2	4	1
3	2	5
4	5	3

3

1	3	4
2	1	2
3	5	3
4	4	1

4

1	4	1
2	5	3
3	2	5
4	1	2

67 **Հին աշխարհի դիցարանների վերաբերյալ նշված փաստարկներից ո՞ր երեքն են սխալ.**

ա. Կին աստվածուհին եղել է աստվածների մայրը շումերական դիցարանում:
բ. Իսիդան եղել է սիրո և գեղեցկության աստվածուհին շումերական դիցարանում:
գ. Հորը եղել է երկնքի աստվածը եգիտական դիցարանում:
դ. Ահուրամազդան երկնքի և երկրի, մարդու և մարդկային երջանկության արարիչն էր զրադաշտական դիցարանում:
ե. Դին անձրևի, կայծակի և քամու տիրակալն էր չինական դիցարանում:
զ. Ամոնը արևի և արվեստների աստվածն էր շումերական դիցարանում:
է. Անը աստվածների հայրն էր չինական դիցարանում:

1) ա, բ, է
2) ա, բ, դ
3) գ, ե, զ
4) բ, զ, է

68 **Նշված պնդումներից ընտրել չորսը, որոնք վերցված են հին աշխարհի մտածողների տեսակետներից.**

ա. Ըստ Թալես Միլեթացու՝ թիվը բոլոր իրերի կեցության սկիզբն է:
բ. Պտղոմեոսը զարգացրեց տիեզերքի երկրակենտրոն կառուցվածքի մասին տեսությունը:
գ. Մարկիանոս Կապելան աշխարհի նյութական նախահիմք էր համարում ջուրը կամ օդը:
դ. Հիպարքոսը կազմեց աստղացուցակ, որը պարունակում էր շուրջ հազար աստղերի երկնային դիրքաթվերը և պայծառությունների գնահատականները:
ե. Ըստ Պլատոնի՝ գլխավորը «բարիքի գաղափարն է», մյուս գաղափարները գտնվում են նրանից ներքև, իսկ զգայական, նյութական աշխարհը գաղափարների ստվերներն են:
զ. Արիստոտելի գոյաբանական ուսմունքը տատանվում էր իդեալիզմի և մատերիալիզմի միջև:
է. Մարկիանոս Կապելան աշխարհի նյութական հիմք էր համարում ապեյրոնը (անվերջ, անորոշ սկզբնանյութ):

1) դ, ե, զ, է
2) ա, բ, դ, է
3) բ, դ, ե, զ
4) ա, ե, զ, է

69 **Ռուսաստանի պատմության վերաբերյալ բերված փաստերից ո՞ր չորսն են ճիշտ.**

ա. Միխայիլ Ռոմանովի մահից հետո Ռուսաստանում սկսվեցին գահակալական կռիվներ, լեհերը գրավեցին Մոսկվան, շվեդները՝ Նովգորոդը:
բ. XIX դարի սկզբին Ռուսաստանը Եվրոպայում ամենախոշոր տերությունն էր թե՛ ազգաբնակչությամբ, թե՛ տարածքով:
գ. Իվան IV-ը Մոսկվայում հրավիրվեց դասային ներկայացուցչական առաջին երկրային ժողովը:
դ. Իվան IV-ի օրոք Ռուսաստանին միացվեց Կազանը, Աստրախանը, Արևմտյան Սիբիրը:
ե. Ռուսաստանի պատմության 1598-1613 թթ. ժամանակաշրջանը հայտնի է «խառնակ ժամանակաշրջան» անունով:
զ. Պետրոս I-ինի օրոք Ռուսաստանի օրենսդրության մեջ առաջին անգամ ամրապնդվեց «հպատակների իրավունք» հասկացությունը:
է. Սլավոնների ավատատիրական պետությունն առաջացավ 882 թ., երբ իշխան Օլեգը Կիևն ու Նովգորոդը միացրեց Մոսկվային:

1) բ, գ, դ, ե
2) ա, բ, դ, ե
3) ա, դ, զ, է
4) բ, գ, ե, է

70 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1) վեչե
2) ուլուս
3) պոլյուդիե
4) վոտչինա
5) դուրուլթայ

ա. հարկահավաքման ձև Հին Ռուսիայում
բ. ժողովրդական ժողովը արևելյան սլավոնների մոտ
գ. պայմանական հողատիրույթը Հին Ռուսիայում
դ. համամոնղոլական համագումար
ե. փոխարքայություն մոնղոլական կայսրությունում
զ. մասնավոր հողատիրույթը Հին Ռուսիայում

1) 1-բ, 2-գ, 3-ա, 4-զ, 5- ե
2) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա, 5-ե
3) 1-բ, 2-ե, 3-ա, 4-զ, 5-դ
4) 1-գ, 2-բ, 3-ե, 4-ա, 5- դ

71 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1) գլոբալացում
2) կոսմոպոլիտիզմ
3) ագրեսիա
4) դիկտատուրա
5) կապիտուլյացիա
6) օկուպացիա

ա. բռնապետություն
բ. անձնատվություն
գ. գերիշխանություն
դ. համաշխարհայնացում
ե. ռազմակալում
զ. աշխարհաքաղաքացիություն
է. հարձակում

1) 1-բ, 2-դ, 3-ե, 4-գ, 5-ա, 6-է
2) 1-գ, 2-ա, 3-դ, 4-զ, 5-բ, 6-ե
3) 1-զ, 2-բ, 3-ա, 4-գ, 5-դ, 6-է
4) 1-դ, 2-զ, 3-է, 4-ա, 5-բ, 6-ե

72 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1) ֆովիզմ
2) ռոմանտիզմ
3) սյուրռեալիզմ
4) էքսպրեսիոնիզմ
5) ռեալիզմ
6) կուբիզմ

ա. Արվեստի այս ուղղությանը բնորոշ է կյանքի ճշմարտացի պատկերումը, գնահատումը, մեկնաբանումը, հասարակական արատների վերհանումը և քննադատությունը:
բ. Այս ուղղության ներկայացուցիչները կարծում են, որ ամեն իր կարող է արվեստի առարկա լինել:
գ. Այս ուղղության ներկայացուցիչների կարծիքով՝ միակ իրական գոյություն ունեցողը մարդու հոգևոր աշխարհն է, որի արտացոլումը արվեստի գլխավոր նպատակն է:
դ. Արվեստի այս ուղղությանը բնորոշ է հակակրանքը դեպի մարդկային տառապանքները, բռնությունները, պատերազմներն ու անարդարությունները
ե. Այս ոճի հետևորդներն առարկաներին տալիս են իրականության պատրանք, միավորում իրականը և ոչ իրականը:
զ. Ֆրանսիական գեղանկարչության հոսանք է, որից սկսվեց արվեստի մեջ գունային հեղափոխությունը:
է. Այս ուղղության հետևորդները աշխարհը պատկերում են պարզ երկրաչափական կառուցվածքների ձևով՝ աղավաղելով իրական առարկաների պատկերները:

1) 1-գ, 2-զ, 3-ե, 4-դ, 5-ա, 6-բ
2) 1-զ, 2-դ, 3-ե, 4-գ, 5-ա, 6-է
3) 1-ե, 2-դ, 3-ա, 4-գ, 5-բ, 6-է
4) 1-է, 2-զ, 3-ե, 4-բ, 5-ա, 6-դ

73 **Նշված փաստարկներից ընտրել չորսը, որոնք հանդիսանում են Կլավդիոս կայսեր գործունեության հետևանքներ.**

ա. Պրովինցիաների տասնյակ հազարավոր բնակիչների շնորհվեց հռոմեական քաղաքացիություն:
բ. Հռենոսից մինչև Դանուբ գետն ընկած շրջանում կառուցվեցին սահմանային ամրություններ:
գ. Ստեղծվեց իսկական կայսերական կառավարման աշխատակազմ:
դ. Նվաճվեցին Միջագետքը, պարթևների մայրաքաղաք Տիզբոնը:
ե. Մեծ Բրիտանիայում կառուցվեց կայսեր անունը կրող ամրությունների շղթան, որը ձգվում էր կղզու արևմուտքից արևելք:
զ. Մեծ քանակությամբ ստրուկներ նշանակվեցին պետական բարձր պաշտոնների:
է. Նվաճվեցին Բրիտանիայի մեծ մասը, Թրակիան և Մավրիտանիան:
ը. Կայսրությունը բաժանվեց 12 դիոցեզների:
թ. Հիմք դրվեց կառավարման նոր եղանակին՝ դոմինանտին:

1) բ, դ, ե, ը
2) ա, բ, զ, թ
3) գ, ե, է, ը
4) ա, գ, զ, է

74 **Թվարկվածներից ո՞ր երեքը Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքներից չեն.**

ա. Պարտությունների և հեղափոխությունների հետևանքով չորս կայսրությունների՝ Ռուսաստանի, Գերմանիայի, Օսմանյան տերության և Ավստրո-Հունգարիայի փլուզումը:
բ. Առաջին անգամ ատոմային ռումբի կիրառումը:
գ. Երեք նոր կայսրությունների՝ Ավստրիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի հզորացումը:
դ. Գաղութներում ազատագրական պայքարի անկումը:
ե. Խորհրդային Ռուսաստան պետության ստեղծումը:
զ. Հսկայական տարածքների ամայացումը, հազարավոր բնակավայրերի կործանումը, մեծ քանակությամբ մշակութային արժեքների ոչնչացումը:
է. Մարդկանց զանգվածային ոչնչացումը հնարավոր դարձնող զենքերի նոր տեսակների ստեղծումը:

1) գ, դ, ե
2) ա, բ, դ
3) բ, գ, դ
4) բ, զ, է

75 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Օտտոն I-ի առաջին արշավանքը Իտալիա
բ. Վերդենի դաշնագրի ստորագրումը
գ. Գերմանացիների առաջին հաղթանակը հունգարների դեմ
դ. Ինոկենտիոս III պապի կողմից ալբիգոյների դեմ կազմակերպած խաչակրաց արշավանքը
ե. Գրիգորիս VII պապի կողմից Հենրիխ VI կայսեր բանադրանքը
զ. Գերմանական (Տևտոնական) թագավորության ստեղծումը
է. Դանիայի արքա Բեռվուլֆին նվիրված անգլոսաքսոնական վիպերգի գրի առնումը հին անգլերենով
ը. Կոնրադ I Ֆրանկոնացու գահակալության սկիզբը
թ. Սուասոն քաղաքում Պիպին Կարճահասակի թագավոր հռչակվելը
ժ. Կարլոս Մեծի կողմից Սաքսոնիայի նվաճման ավարտը

1) է, թ, ժ, բ, գ, ը, զ, ե, դ, ա
2) թ, ժ, բ, ը, զ, գ, ա, է, ե, դ
3) թ, ժ, է, բ, ը, զ, գ, ա, ե, դ
4) ժ, է, թ, բ, գ, ը, ե, դ, ա, զ

76 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Միասնական դրամական միավորի՝ Եվրոյի շրջանառության մեջ դրվելը
բ. Հոլանդիայի Մաաստրիխտ քաղաքում եվրոպական ընկերակցության պետությունների ղեկավարների միության վերաբերյալ պայմանագրի ստորագրումը
գ. ՄԱԿ-ի շրջանակներում գործող միջազգային դատարանի գործունեության սկիզբը
դ. Աճխի և պողպատի եվրոպական միավորման ստեղծումը (ԱՊԵՄ)
ե. Բեռլինի պատի փլուզումը
զ. Շենգենյան համաձայնագրի ուժի մեջ մտելը
է. ՀԱՊԿ անդամ պետությունների նախագահների կողմից Արագ արձագանքման հավաքական ուժերի ստեղծման վերաբերյալ որոշման կայացումը Մոսկվայում
ը. Կարիբյան ճգնաժամը
թ. «Վհուկների որսի» դադարեցումը ԱՄՆ-ի նախագահ Դ.Էյզենհաուերի կողմից
ժ. Դալլաս քաղաքում ԱՄՆ-ի նախագահ Ջ. Քենեդու սպանությունը

1) գ, դ, թ, ը, ժ, ե, բ, զ, ա, է
2) դ, գ, ը, թ, է, ե, բ, զ, ը, ա
3) թ, է, ժ, գ, բ, զ, զ, ը, ե, ա
4) է, գ, թ, դ, ժ, ե, ը, զ, ա, բ

77 **Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.**

1) Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի միջև ծովային համաձայնագրի ստորագրումը
2) Ավստրիայի գրավումը գերմանական զորքերի կողմից
3) «Մյունխենյան գործարքի» կնքումը
4) Լիտվիայի Մեմել նավահանգստային քաղաքի գրավումը Գերմանիայի կողմից
5) Չհարձակման վերաբերյալ խորհրդա-գերմանական պայմանագրի կնքումը

ա. 1939 թ. մարտ
բ. 1939 թ. օգոստոս
գ. 1935 թ. հունիս
դ. 1938 թ. սեպտեմբեր
ե. 1939 թ. մայիս
զ. 1938 թ. մարտ

1) 1-ե, 2-ա, 3-զ, 4-գ, 5-բ
2) 1-ե, 2-դ, 3-զ, 4-բ, 5-ա
3) 1-գ, 2-զ, 3-դ, 4-ե, 5-ա
4) 1-գ, 2-զ, 3-դ, 4-ա, 5-բ

78 **Կատարել համապատասխանեցում.**

N	Երկիր	N	Արվեստագետ	N	Արվեստի ուղղություն
1	Իտալիա	1	Վ.Կանդինսկի	1	Նեոռեալիզմ
2	Գերմանիա	2	Է.Դեգա	2	Ֆուտուրիզմ
3	ԱՄՆ	3	Լ.Վիսկոնտի	3	Աբստրակցիոնիզմ
4	Ֆրանսիա	4	Է.Նոլդիե	4	Էքսպրեսիոնիզմ
		5	Գ.Սևերինի	5	իմպրեսիոնիզմ

1

1	3	1
2	4	4
3	1	3
4	2	5

2

1	3	4
2	2	5
3	4	2
4	5	3

3

1	5	5
2	4	2
3	1	3
4	3	4

4

1	5	2
2	4	1
3	1	3
4	3	4

79 **Կատարել համապատասխանեցում.**

	Գործիչ		Մայրաքաղաք		Պետություն
1	Մուրադ I	1	Բյուզանդիոն	1	Եգիպտոս
2	Ամենհոտեպ IV	2	Բաբելոն	2	Հունաստան
3	Կոստանդիանոս կայսր	3	Ադրիանապոլիս	3	Օսմանյան պետություն
4	Ալեքսանդր Մակեդոնացի	4	Հռոմ	4	Մակեդոնիա
		5	Ախետաթոն	5	Հռոմեական կայսրություն

1

1	3	3
2	5	1
3	4	5
4	2	4

2

1	1	3
2	2	1
3	4	5
4	3	2

3

1	2	3
2	5	1
3	1	2
4	4	4

4

1	3	3
2	5	1
3	1	5
4	2	4

80 **Կատարել համապատասխանեցում.**

N		N		N		N	
1	Հովհան Անհողին	1	936-973 թթ.	1	Բյուզանդիա	1	Նա արգելեց երկրից ոսկու և արծաթի արտահանումը պապական արքունիք
2	Ֆիլիպ IV Գեղեցիկ	2	1199-1216 թթ.	2	Գերմանիա	2	Նա նվաճել է Բուլղարիական թագավորությունը և ամբողջ Բալկանյան թերակղզին:
3	Օտտոն I	3	1285-1314 թթ.	3	Անգլիա	3	Նա ամուսնացել Կարլոս Խիզախի դստեր Մարիայի հետ և Բուրգունդիան միացրել է իր տերությանը:
4	Բարսեղ (Վասիլ) II	4	1056-1079 թթ.	4	Ֆրանսիա	4	Նա հակամարտության մեջ մտավ Ինոկենտիոս III պապի հետ, պարտվեց և իրեն ճանաչեց պապի վասալ
		5	976-1025 թթ.	5	Իսպանիա	5	Նա ամուսնացել է Իտալիայի թագավորության օրինական ժառանգորդուհու հետ և իրեն հռչակել Իտալիայի թագավոր

1

1	5	4	3
2	1	2	1
3	4	5	5
4	3	1	2

2

1	2	3	1
2	3	4	2
3	1	2	4
4	5	1	3

3

1	2	3	4
2	3	4	1
3	1	2	5
4	5	1	2

4

1	2	3	4
2	3	1	1
3	4	2	5
4	1	4	3